

ՆՈՐԱՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27.02.2012 թ

Պետք է նշել, որ համայնքի ցանկացած հիմնախնդիր, հարց, մանրուք գտնվում է համայնքի ղեկավարի մշտական ուշադրության կենտրոնում և անպայման ստանում լուծում

Նորատուս համայնքի ղեկավարի կողմից 2011թ. ընթացքում հրավիրվել է ավագանու թվով 10 նիստ, ընդունվել 51 որոշում:

2011թ. բյուջեն կատարվել է 97.5%-ով, նախատեսվել է եկամուտ – 100463.6 հազդրամ, կատարվել է 97824.8 հազ. դրամով:

Տարվա ընթացքում համայնքի 100 սոցիալապես անապահով ընտանիք ստացել է ֆինանսական օգնություն, ինչպես նաև նյութական աջակցություն են ստացել Հայրենական Մեծ պատերազմի վետերանները, զոհվածի այրիները, յուրաքանչյուր երրորդ երեխայի ծննդյան դեպքում նրանց ընտանիքները, խրախուսվել են «Հայ ասպետ» հեռուստախաղին մասնակցած երեխաները, մշտապես խրախուսվում և դրամական աջակցություն են ստանում բռնցքամարտիկները:

Համայնքի ֆինանսավորմամբ և Հայջրմուղկոյուղու հետ համատեղ 2200մ երկարությամբ նոր ջրագիծ է անցկացվել Հովհաննես Շիրազ, Գործարանային, Գեղամ Կարապետյան փողոցներում, Սևանի փողոցի 4 նրբանցքներում, Գր. Լուսավորչի 10-րդ նրբանցքում:

2012 թ ևս նախատեսվել է ամբողջովին վերանորոգել ջրագծի ցանցը՝ բոլոր թաղամասերում ապահովելով կանոնավոր ջրամատակարարում

Համայնքում կանոնավոր գործում են արվեստի դպրոցը և մանկապարտեզները:

Արվեստի դպրոցում 2011թ. գործել է 11 բաժին՝ 184 աշակերտով:

2012 թվականին նախատեսվել է կառուցել Արվեստի դպրոցի նոր շենք:

Թիվ 1,2 մանկապարտեզները գործում են անվճար:

2011թ.մանկապարտեզներ հաճախել են 115 երեխա:

Տարվա ընթացքում հիմնանորոգվել է թիվ 1 մանկապարտեզը:

Ներկա պահին հիմնանորոգվում է թիվ 2 մանկապարտեզը:

Համայնքում ստեղծվել և այժմ էլ գործում է հաշմանդամ երեխաների կենտրոնը:

2011 թվականի սեպտեմբեր ամսից համայնքի բյուջեի և « Ռադիո» ՓԲԸ-ի միջոցների համատեղ ֆինանսավորմամբ ուսանողների երթևեկությունը դեպի Գավառի տարբեր ուս. հատատություններ կազմակերպվում է անվճար:

Գյուղապետարանում 2011թ. անցկացվել է ջեռուցման ցանց, ձեռք է բերվել անհրաժեշտ գույք, հիմնանորոգվել է մշակույթի տան դահլիճը :

Տարվա ընթացքում համայնքում կատարվել է հասցեավորում, ձեռք է բերվել փողոցների անվանումների ցուցատախտակներ, անհատական տների համարներ, որոնց տեղադրման աշխատանքները ընթացքի մեջ է:

Ավարտման փուլում է համայնքի գլխավոր հատակագծի նախագծման աշխատանքերը:

2011թ սկսվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնանորոգման աշխատանքները,

2012թ. նախատեսված է կատարել զոհվածների հուշարձանի տարածքի վերանորոգման, ծառատնկման, լուսավորության ցանցի անցկացման և կանաչապատման աշխատանքներ:

2011թ. հիմնանորոգվել է Պ. Սևակի փողոցի 420մ երկարությամբ հատվածը:

2012թ. և նախատեսվել է ասֆալտապատել Գր.Լուսավորիչ փողոցի 230մ, Խ. Աբովյան փողոցի 360 մ երկարությամբ հատվածները:

Մշտապես բարեկարգվում են ներհամայնքային ճանապարհները, կատարվում է հողային աշխատանքներ, հնարավորության սահմաններում վերանորոգվում են փողոցներ, նրբանցքներ:

2012թ և նախատեսվել է լուսավորություն անցկացնել 10.6կմ թվով ութ փողոցներում ,23 նրբանցքներում:

Նորատուս-Սպասարկում կազմակերպության կողմից կատարվում է կանոնավոր աղբահանություն, տեղադրվել են սպասասարահներ, աղբարկղեր, մաքրվել,ավլվել են փողոցները:

2011 թ ևս համայնքում կազմակերպվել է Ամանորին նվիրված միջոցառում, համայնքի դպրոցների 1-3 դասարանների աշակերտներին, մանկապարտեզների, սոց. անապահով ընտանիքների երեխաներին տրվել է նվերներ;

Համայնքի 2012 թ բյուջեով նախատեսվել է գազաֆիկացնել 4. Տերյան փողոցի վերջնամասը, ինչպես նաև բարերարների միջոցներով կառուցել սպորտային համալիր:

